Հաստատում եմ՝
Արևելագիտության ինստիտուտի տնօրեն
պ.գ.թ., դոցենտ Գոհար Իսկանդարյան

08.06.2026 թ.

Սույն թվականի հունիսի 4-ին Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնում տեղի ունեցած նիստի արձանագրությունից:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝ արաբական երկրների բաժնի վարիչ՝ պ.գ.թ., դոցենտ Լիլիթ Հարությունյանը, միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ՝ պ.գ.թ., դոցենտ Արաքս Փաշայանը, արաբական երկրների բաժնի ավագ գիտաշխատող՝ պ.գ.թ., դոցենտ Գոռ Գևորգյանը, առաջատար գիտաշխատող՝ պ.գ.թ. Արամ Գասպարյանը, ավագ գիտաշխատող՝ պ.գ.թ. Գրիգոր Վարդանյանը, կրտսեր գիտաշխատողներ՝ Անուշ Թամրազյանը և Հրաչուհի Թուրվանդյանը, միջազգային հարաբերությունների բաժնի կրտսեր գիտաշխատող՝ Քնարիկ Սարգսյանը:

Կ Ա Ր Ծ Ի Ք

Շաքէ Զաւէնի Մենկեչյանի «Արաբական Միացեալ Էմիրութիւններու հայ համայնքի հասարակական-քաղաքական կեանքը 1970-ական թուականներէն մինչեւ մեր օրերը» ատենախոսության վերաբերյալ

Հայկական սփյուռքին՝ մասնավորապես Մերձավոր Արևելքի արաբական տարբեր երկրների հայ համայնքներին առնչվող հիմնահարցերի ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետության համար ունի կարևոր գիտական, գործնական և ռազմավարական նշանակությունը: Շաքէ Մենկեչյանի «Արաբական Միացեալ Էմիրութիւններու հայ համայնքի հասարակական-քաղաքական կեանքը 1970-ական թուականներէն մինչեւ մեր

օրերը» ատենախոսությունը նվիրված է ԱՄԷ հայ համայնքի հետազոտմանն ու մի շարք արդիական հիմնահարցերի լուսաբանմանը:

Կերպափոխվող Մերձավոր Արևելքում արդի փուլում տեղի ունեցող գործընթացները մեծապես ազդում են արաբական տարբեր երկրների հայ համայնքների վրա ևս, որոնք դրսևորվում են ինչպես ներսփյուռքյան, այնպես էլ դեպի Հայաստան տեղաշարժերով: Մասնավորապես՝ 2011-2024 թթ. սիրիական հակամարտության արդյունքում մեծ թվով սիրիահայեր ստիպված եղան լքել Սիրիան և հաստատվել նաև Ծոցի արաբական երկրներում՝ այդ թվում ԱՄԷ-ում:

Ատենախոսը կատարել է մեծածավալ փաստահավաք աշխատանք՝ ներկայացնելով ԱՄԷ հայ համայնքի պատմությունը, զարգացման փուլերը և համայնքային կառույցների գործունեությունը: Ատենախոսության կարևոր արժանիքներից է ծավալուն չհամակարգված նյութի համակարգումը, ինչը կարող է օգտակար հիմք դառնալ հետագա ուսումնասիրությունների համար:

Միաժամանակ, աշխատանքն ունի մի շարք թերություններ և վիճահարույց դրույթներ:

Նախ, աշխատանքի ռազմավարական նշանակությունը բավարար չափով հիմնավորված չէ: Արդիականությունը գլխավորապես հիմնավորվում է թեմայի չուսումնասիրված լինելու փաստով, սակայն հեղինակն իր աշխատանքում օրինակ օգտագործում է Ծ. Աշըգեանի «Քառորդ դար հայերը Տուպայի և Հյուսիսային Էմիրությունների մեջ...» աշխատանքը, ինչպես նաև մի քանի այլ ուսումնասիրություններ ևս, որոնք նվիրված են ԱՄԷ հայ համայնքի տարբեր հիմնահարցերի հետազոտմանը: Մեր կարծիքով նման մոտեցումը լիարժեք չէ և չի բացահայտում թեմայի գիտական ու տեսական կարևորությունն ու արդիականությունը:

Բավարար չափով հիմնավորված չէ նաև աշխատանքի գիտական նորույթը: Հեղինակը նշում է, որ սույն աշխատանքը գիտական նորույթ է իր ամբողջության մեջ, նաև ակնարկում է, որ ԱՄԷ հայ համայնքի վերաբերյալ հետազոտությունները սահմանափակ են, այդ հանգամանքն ինքնին դեռևս չի կարող դիտվել որպես գիտական նորույթի բավարար հիմնավորում:

Աշխատանքի կառուցվածքը որոշ առումներով խնդրահարույց է: Մասնավորապես, 1.1 ենթագլխի ԱՄԷ հիմնադրմանն առնչվող հատվածը կարելի էր հանել, քանի որ այն մեծապես նկարագրական բնույթ է կրում և սահմանափակ արժեք ունի հետազոտության

հիմնական խնդրի քննության տեսանկյունից: Աշխատանքի 3-րդ գլուխը, որը նվիրված է ԱՄԷ հայ համայնքի դերի ուսումնասիրությանը ՀՀ-ԱՄԷ հարաբերություններում, ամբողջությամբ չի ներկայացնում համայնքի դերն այդ հարաբերություններում: Մասնավորապես բացակայում է տնտեսական ոլորտի հետազոտությունը, ինչպես ՀՀ-ԱՄԷ հարաբերություններում, այնպես էլ հայ համայնքի տնտեսական դերի տեսանկյունից:

Աշխատանքում հեղինակը բարձրացնում է բազմաթիվ հարցեր, սակայն դրանց հիման վրա հստակ գիտական խնդիր կամ հիպոթեզ չի ձևակերպում: Ատենախոսության մեջ գերակշռում է նկարագրական և փաստահավաք բաղադրիչը, մինչդեռ բացակայում է բավարար վերլուծական շերտը: Շատ դեպքերում հեղինակն արձանագրում է իրողություններ, սակայն չի գնում դրանց խորքային պատճառահետևանքային մեկնաբանության հետևից և հստակ չի ձևակերպում, թե ինչ հիմնական պնդումներ է առաջ քաշում:

Տեսական և մեթոդաբանական հիմքը ևս ունի թույլ կառուցվածք: Գրականության տեսության բաժնում նպատակահարմար կլիներ ավելի մանրամասն անդրադառնալ հարցազրույցների և բանավոր պատմության աղբյուրների կիրառման առանձնահատկություններին, իսկ մեթոդաբանության բաժնում՝ առավել հստակ ներկայացնել դաշտային հետազոտության շրջանակը, ընտրանքի սկզբունքները և կիրառված չափորոշիչները: Ատենախոսությունը կշահեր նաև թեմային առնչվող մի շարք արժեքավոր հետազոտությունների և մասնագիտական հրապարակումների ավելի լայն ներգրավումից: Օրինակ՝ աշխատանքը կշահեր, եթե հեղինակն օգտագործեր նաև 2023 թ. Արևելագիտության ինստիտուտում կազմակերպված «Մերձավոր Արևելքի արաբական երկրների հայ համայնքները. արդի միտումներ և փոխակերպումներ» միջազգային գիտաժողովի նյութերը, որոնք նվիրված են նաև Ծոցի տարածաշրջանի հայ համայնքների հետազոտությանը, ինչպես նաև Հրաչ Չիլինգիրյանի (Tchilingirian H. (2023) Armenian communities in the Middle East: Losing the past in the future? in S. Roussos (Ed.) From pluralism to extinction? Prospective and challenges for Christians in the Middle East) հետազոտությունը, որը նվիրված է քրիստոնյաների՝ մասնավորապես հայերի Մերձավոր Արևելքում ընթացող զարգացումների առաջքում տեղաշարժերի ուսումնասիրմանը: Ցանկալի կլիներ, եթե հեղինակն օգտագործեր նաև Armenian Diaspora Survey տեղեկատվական հարթակի հետազոտությունները:

Աշխատանքը կշահեր, եթե հեղինակն ԱՄԷ հայ համայնքի ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական հենք վերցներ այդ երկրի համակեցության և կրոնական երկխոսության քաղաքականությունը (coexistence and religious dialogue), որն էլ ընկած է ԱՄԷ փոքրամասնությունների նկատմամբ վարվող քաղաքականության առանցքում: Աշխատանքը կշահեր նաև, եթե ԱՄԷ քաղաքականությունը դիտարկվեր նաև Joseph Nye-ի փափուկ ուժի (Soft power) տեսության հենքով, որի կարևոր բաղադրիչներից են նաև կրոնական ու մշակութային համակեցությունը, երկխոսությունն ու դիվանագիտությունը:

Խնդրահարույց է նաև ատենախոսության վերնագրի ընտրությունը: Թեև աշխատանքը վերնագրված է՝ ԱՄԷ հայ համայնքի հասարակական-քաղաքական կյանքի ուսումնասիրություն, քաղաքական կյանքի բաղադրիչը համեմատաբար սահմանափակ է լուսաբանված: Ընդհանրապես, ելնելով ԱՄԷ քաղաքական համակարգի առանձնահատկությունից, այդ երկրի փոքրամասնությունները՝ այդ թվում նաև հայերը, չեն կարող ակտիվ ներգրավվածություն ունենալ երկրի քաղաքական կյանքում: Բավարար է միայն նշել, որ փոքրամասնությունների ներկայացուցիչները՝ այդ թվում նաև հայերը, ԱՄԷ-ում չունեն քաղաքացիության իրավունք, ինչի մասին աշխատանքում խոսում է նաև հեղինակը:

Եզրակացությունների բաժինը ևս վերամշակման կարիք ունի: Շատ դեպքերում եզրակացությունները սահմանափակվում են մեկ-երկու նախադասությամբ և չեն արտացոլում կատարված հետազոտության ամբողջական արդյունքները: Մասնավորապես՝ եզրակացություն 1, 2-ը հայտնի փաստերի արձանագրում է, որոնք կապված են հայերի ԱՄԷ-ում հաստատման հետ:

Ատենախոսության մեջ առկա են նաև տեխնիկական բնույթի թերություններ, առանձին վրիպակներ և բացթողումներ, ինչպես նաև արաբերեն անվանումների տառադարձման ոչ նույնական սկզբունքի կիրառում:

Ամփոփելով նշենք, որ վերոնշյալ դիտարկումներն ու բացթողումները չեն ստվերում աշխատանքի ընդհանուր արժեքը: Հեղինակը կատարել է ծավալուն և օգտակար աշխատանք՝ ի մի բերելով ԱՄԷ հայ համայնքի պատմության և գործունեության վերաբերյալ մեծածավալ նյութ: Մեծապես կարևորելով մեր սփյուռքահայ հայրենակիցների գիտական - հետազոտական աշխատանք կատարելու ձգտումն ու փորձերը և հաշվի առնելով կատարված աշխատանքի նշանակությունը՝ փաստենք, որ Շաքէ Զաւէնի Մենկեչյանի «Արաբական Միացեալ Էմիրութիւններու հայ համայնքի հասարակական-

քաղաքական կեանքը 1970-ական թուականներէն մինչեւ մեր օրերը» ատենախոսությունը ընդհանուր առմամբ բավարարում է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է «Հայոց պատմություն» մասնագիտությամբ իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Արևելագիտության ինստիտուտի

արաբական երկրների բաժնի վարիչ՝

պ.գ.թ., դոցենտ Լիլիթ Հարությունյան

08.06.2026 թ.

Հաստատում եմ՝

Արևելագիտության ինստիտուտի գիտքարտուղար՝

պ.գ.թ. Եվա Հարությունյան

08.06.2026 թ.